

debate between the two main representatives of main two theological schools was conducted around those theological terms and their interpretation.

The article also shows the essence of disputes and its practical consequences for the Christian world and also the commencement of a new era in the theological disputes of Christian Church.

ՄԱՅՐ ԱՍՏՎԱԾՈՒՅՈՒ ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

Գ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դիցաբանության տեսության և կրոնագիտության համրաճանաչ տեսակետի համաձայն Մայր աստվածուիու դիցաբանական կերպարը նախապատմական շրջանի առավել տարածված պաշտամունքներից է, որն անցել է ձևավորման, կայացման և գործառնության տևական պատմություն։ Անառարկելի է համարվում նաև, որ «համամարդկային» և «համաշխարհային» դերակատարություն ունեցած այս պաշտամունքն աստիճանաբար զատվել է «կանացի սկզբունքի» պաշտամունքից, որը գիտության մեջ ընդունված է բնութագրել որպես թեկզմի դարաշրջանին նախորդող կրոնական այնպիսի հավատալիքների և պրակտիկայի (պաշտամունքի) ամբողջություն, որոնցում իրական կամ խորհրդանշական կերպով գերակշիռ դեր են կատարել կնոջ պատկերներն ու ծեսերը¹։ «Կանացի պաշտամունքը» բավականին հին է, որի մասին մեզ հասած հնագույն տեղեկությունները վերաբերում են ներևս վերին քարեղարի (մ.թ.ա. 40-10 հազ. տարի առաջ) շրջանին։ Իսկ այդ պաշտամունքի նյութական վկայությունը երկրագնդի տարբեր տարածաշրջաններում մեծ ճանաչում ունեցող մերկ կնոջ՝ «քարեղարյան Վեներայի» պատկերանկարներն են, բազմապիսի կավե քանդակները, հարթանկարները և այլն, որոնցում պատկերված կանացի օրգանների սեռական հատկանիշները վկայում են այդ պաշտամունքի համընդգրկուն բնույթի մասին։

«Քարեղարյան Վեներաները» պաշտամունքային համալիրի մասեր լինելով, միաժամանակ խորհրդանշել են նաև ծննդաբերության պաշտամունքը։ Այլ կերպ ասած՝ դիցապաշտ երևակայության կողմից կնոջ մանկածնական հնարավորությունը ևս դարձել է սրբացման ծիսապաշտամունքային արարողակարգի հիմնական օբյեկտ։ Համեմատաբար ավելի ուշ շրջանում այդ պաշտամունքի անբաժան մաս են կազմել նաև տիեզերքի և նրանում բնակվող գոյերի սկիզբ համարվող «նախասկզբնական աստվածային գույգի», իսկ հետագայում նաև՝ երկրության կերպով պատկերանկարների (եղբոր և քրոջ արենակցական ամուսնության տեսքով) պատկերա-

¹Տե՛ս՝ ս **Религиоведение** (Энциклопедический словарь). М., 2006, с. 342; Հմնտ.՝ **Мифы народов мира**. Энциклопедия. Т. 1, М., 1987, с. 179; **Мифология**. Большой энциклопедический словарь. М., 1998, с. 660:

ցումները²: Հասուն դիցաբանական համակարգերում Մայր աստվածուիու նշված խորհրդանշանները «հարստանում են» նաև պաշտամունքային յուրատիպ նոր գերով, ինչպիսիք են, օրինակ, «կնոջը յուրահատուկ զբաղմունքի» այս կամ այն ոլորտի հովանավորությունը: Դիցաբանական Մայր աստվածուիուն վերագրող պաշտամունքային այդ գործառույթները լայն տարածում են ստացել հատկապես պատմական շրջանի ազգակրոնական համակարգերում, որը դրսնորվել է «սրբազն հովանավորուիիների» (կտավագործության, մանվածքի և այլ ոլորտների հովանավոր դիցուիիների) պաշտամունքի տեսքով: Դիցաբանության տեսության և կրոնագիտության շրջանակներում փաստվում է նաև այն տեսակետը, որ մայրական սկզբի դիցապաշտական խորհրդանշանների աստիճանական բարեշրջման ընթացքում էլ ձևավորվել է Մայր աստվածուիու պաշտամունքը³:

Այդ թռուցիկ նկարագրությունն անգամ ակնհայտ ցույց է տալիս, որ դիցաբանական համակարգերում պաշտամունքային ուրույն տեղ ունեցող բազմագործառնական Մայր աստվածուիու կերպարը, այլ կերպ ասած **Մայր աստվածուի պաշտամունքն** ամենից առաջ ընկալվել է որպես «տիեզերական աստվածությունների» շարքի գլխավոր ներկայացուցիչներից մեկը: Եվ քանի որ Մայր աստվածուիու պաշտամունքը սերտորեն շաղկապված է եղել քառու և եթերի, աշխարհակառուցի, բեղոգնիայի, երկվորյակների և դիցապաշտական հիմնարար այլ սկզբունքների, ինչպես նաև առասպելական անհատների այլևայլ հավատալիքների հետ, պաշտամունքային կյանքում ևս այն բնութագրվել է **ծիսական արարողությունների ընդգծված բազմազանությամբ**: Հավանաբար դա է պատճառը նաև, որ դիցաբանության տեսության և կրոնագիտական գրականության մեջ այս պաշտամունքը երբեմն որակվում է ընդհանրական «**Մեծ մայր» անվամբ**:

Արդի գիտության համարականաց տեսակետներից մեկն էլ այն է, որ արխայիկ և անտիկ հասարակարգերում կնոջ տեղի, դերի, հավասարապես նաև Մայր աստվածուիու պաշտամունքային ընթանումները սերտորեն շաղկապված են եղել մայրական իրավունքի հետ: Վերլուծական այդ դաշտում արդյունավետ աշխատանքներ են կատարվել հատկապես 19-րդ դարում, երբ գիտնականներից շատերը փաստական և էնապիրիկ կրոնագիտական նյութերի ընդհանրացմանը բավականին հիմնավոր հայեցակարգեր առաջադրեցին մայրիշխանության շրջանի վերաբերյալ: Այդ ոլորտում առաջամարտիկներ են համարվում մայրիշխա-

² Համեմատական դիցաբանության և կրոնագիտության այդ տեսակետների մանրամասները տե՛ս՝ ս. **Դիցաբանական բառարան**, Երևան, 1985, էջ 46, 49-50, 121, 147 և այլն, **Мифы народов мира**. Энциклопедия. Т. 1, с. 178; **Мифология**. Большой энциклопедический словарь, с. 660; **Всеобщая история религий мира** (энциклопедия). М., 2006, с. 31:

³ Պատմական շրջանի մեջ հայտնի գրեթե բոլոր դիցաբանական համակարգերում Մայր աստվածուիու պաշտամունքն ունեցել է երկաստիճան ընկալում: Նեղ ինաստով այն նույնացվել է «ամենայնի ծնող» Մայր երկրի կամ արարող աստվածուիու, իսկ լայն ինաստով՝ կնոջը բնորոշ տիեզերական ստեղծագործ սկզբի (երկիրը բնակեցնող արարածների, կրտսեր սերնդի աստվածների, կենդանիների և մարդկանց արարիչ ծնող) հետ: Տե՛ս՝ ս. **Религиоведение** (Энциклопедический словарь), с. 120; **Мифология**. Большой энциклопедический словарь, с. 660; **Мифы народов мира**. Энциклопедия. Т. 1, с. 178 և այլն:

նության տեսության հիմնադիրներից շվեյցարացի գիտնական Ի. Բահոֆենը⁴, ամերիկացի ազգագրագետ Լ. Մորգանը⁵, շոտլանդացի փիլիսոփա և ազգագրագետ Զ. Սակ-Լեննանը⁶, որոնք հիմնահարցին նվիրված իրենց հիմնարար աշխատություններով նոր հորիզոններ նախանշեցին կրոնագիտության համար:

Ի. Բահոֆենը առաջիններից էր, որը փաստական նյութի վերլուծությամբ հրապարակեց մայրիշխանության, որպես հասարակության զարգացման յուրահատուկ փուլի մասին բավական հիմնավոր ուսմունք: Դասարակության հնագույն պատմության «քանալի» համարելով դիցարանությունը և կրոնը, այդ հիմնա վրա նա հանգել է այն հետևողականը, որ «առասպելը խորհրդանշանի մեկնարանություն է»: Տեսաբանն այդ խորհրդանշերից է համարում նաև վաղ կրոններում տեղ գտած արական և իգական սկիզբների (հայրիշխանության և մայրիշխանության) պայքարը: Այդ հիմնա վրա նա նաև ցույց է տվել, որ դիցարանական

⁴ Իրավունքի պատմության ակնառու ներկայացուցիչ Ի. Բախոֆենը եվրոպական երկրներում շրջագայելուց հետո 1844 թ. հրաժարվել է դասախոսական աշխատանքից և «գրասենյակային գիտնականի» աշխատանքի անցնելով մեկը մյուսի հետևից հրատարակել է իրավունքի, Յունաստանի և Հռոմի պատմությանը նվիրված հիմնարար աշխատանքներ, որոնցում առաջարից է մայրիշխանության՝ որպես հասարակության զարգացման յուրահատուկ փուլի մասին գիտական վարկածը: Այդ բնագավառում Ի. Բախոֆենի հեղինակային լուծումների մանրամասները տե՛ս *Bachofen J. J. Versuch über die Grabsersymbolik der Alten.* Basel, 1859; ինչպես նաև *Bachofen J. J. Das Mutterrecht.* Stuttgart, 1861: Յննտ.՝ *Бахофең И. Я.* Материнское право / Религиоведение: хрестоматия. М., 2000, с. 87-114:

⁵ Ամերիկյան իրոկեզմների ուսումնասիրության և օգնության ընկերության հիմնադիր (1840թ.), ազգագրագետ և հնագետ Լ. Յ. Մորգանը «Իրոկեզմների լիգան» (1851 թ.), «Հնագույն հասարակությունը կամ վայրենությունից բարբարոսության միջոցով դեպի քաղաքակրթություն մարդկային առաջադիմության գիր ուսումնասիրությունը» (1877 թ.) աշխատություններում, անդրադառնալով «նախնադարյան հասարակության համապարփակ բջջի»՝ տոհմերի, սեփականության կոլեկտիվ ձևերից անհատականի անցնան, ինչպես նաև խմբակային ձևերից ընտանիքի և անուսանության անհատական ձևերի անցնան էվոլյուցիայի հարցերի համակարգված ուսումնասիրությանը, հիմնավորել է նախնադարյան հասարակության գիտական ամփոփ հայեցակարգ, որտեղ ուրույն տեղ են գրավել նաև մայրական տոհմի և ընդհանրապես մայրական պաշտամունքի մասին արժեքավոր լուծումներ: Մանրամասները տե՛ս *Morgan L. G.* Древнее общество, или исследование линий человеческого прогресса от дикости через варварство к цивилизации. М., 1934:

⁶ Եվոլյուցիոնիստական կրոնագիտության դպրոցի ակնառու ներկայացուցիչ Զ. Սակ-Լեննանը զարգացած կրոնների ձևավորման գործում նատնանշել է վաղ հավատալիքների անուրանալի պատմական դերը և այդ մոտեցումը հիմնավորել է «մշակույթի առաջընթացի» ազդեցությամբ: Անդրադառնալով վաղ կրոններին բնորոշ «կանացի սկզբի» պաշտամունքի մեկնաբանությանը, նաև, կարևորելով ամուսնաշնոտեկան փոխիշությունների դերը, առաջինն է շրջանառության մեջ դրել «էկոզամ» (բառացի՝ արտաքին ամուսնություն) և «էնդրօզամ» (բառացի՝ ներքին ամուսնություն) գիտական հասկացությունները: Տարբեր ժողովուրդների մշակութային և կենցաղային տարրերությունները բացատրելով «զարգացման աստիճանների» տարրերությամբ, այդուհանելով, մյուս էվլյուցիոնիստների նման նաև ևս մշակույթի զարգացումը դիտարկել է որպես «բնության պատմության» մաս: Իսկ զարգացման փուլային հաջորդականությունը դիտարկել է ներքին կապի տեսանկյունից և որակել է որպես «շարունակական շարք», ինչը բնորոշ է համարել բոլոր ժողովուրդների և մշակույթների մեկնաբանության գործում: Յեղինակային այդ լուծումների մանրամասները տե՛ս *MacLennan J. F. On the worship of animals and plants*, London, 1870, ինչպես նաև *MacLennan J. F. Studies in ancient History*, London, 1876 աշխատություններում:

համակարգերում Երկիրը համարվել է «մայրության խորհրդանշ» կամ մայրիշխանության և «կանացի սկզբունքի պաշտամունքը»: Այդ պաշտամունքը տևական շրջանում եղել է հասարակության պատմության շարժիչ ուժը և «լուսանցքային նշանակությամբ» պահպանվել նաև հետագայի հայրիշխանական կրոններում⁷:

Ազգագրական հարուստ նյութի ընդհանրացմամբ Զ. Մակ-Լեննանը հիմնավորել և զարգացրել է այն տեսակետը, ըստ որի մայրիշխանությունը լայն տարածում է ունեցել հատկապես այն ցեղերի մոտ, որոնք հողագործության մեջ անցել են գութանային տնտեսության, իսկ հողանշակնան և բերքի բաշխման հոգսը ընկած էր կոչ ուսերին: Ի օգուտ այդ տեսակետի՝ տեսաբանը վկայակոչում է բազում օրինակներ ոչ միայն խոր հնադարի ազգագրական նյութերից, այլև իր ժամանակի Հյուսիսային Ամերիկայի իրոկեզմների, ինչպես նաև Սումատրա կղզու (որտեղ տարածված է խլամը) բնիկների կենցաղից⁸:

Հիմնահարցի գիտատեսական ամբողջացման և լուծման գործում մեծ է նաև L. Մորգանի Ներդրումը, որն ուսումնասիրելով իրոկեզմների ցեղային միությունը, վերջինիս մոտ բացահայտել է «ծագումնաբանական» երկու հիմնական մոտեցումներ՝ 1) ցեղեր, որոնք իրենց ծևավորման հիմք են համարել մայրական սկիզբը և իրենց սկզբնավորումը բխեցրել են միևնույն «գինե» (ծննդաբերող) նախնից և 2) ցեղեր, որոնք իրենց ծևավորման հիմք են համարել հայրական սկիզբը և իրենց ծագումնաբանությունը բխեցրել են սեփական հերոս նախնիներից⁹:

19-րդ դարի ազգագրական և մարդաբանական հետազոտությունները թույլ տվեցին նաև վեր հանել այն մշակույթները, որտեղ հասարակական կյանքի կենտրոնը եղել է մայրական պաշտամունքը, ինչն էլ դիցաբանության տեսության և կրոնագիտության համար հիմք հանդիսացավ Մայր աստվածուհու և կիսաստվածուհիների դիցաբանական պաշտամունքը ամբողջացնելու համար¹⁰: Այդ համատեքստում հարկ է հիշատակել այն փաստը, որ «Մայր աստվածուհի» հասկացությունը բավականին տարրողունակ է ինչպես պատմական, այնպես էլ ազգակրոնական առումներով: Ընդհանուրն այստեղ այն է, որ «Մայր աստվածուհու» պաշտամունքի հիմքում ընկած սրբության գաղափարն անփոփոխ կերպով խարսխվել է «կանացի կենսատու սկզբի (սուբստանցի)» գաղափարի վրա:

⁷Տե՛ս՝ Բախօֆեն Ի. Յ. Մатеринское право, с. 97-98:

⁸Տե՛ս՝ Վարդման Ե. Женщина в древнем мире. М., 1990, с. 12: Դմնտ.՝ Վсесообщая история религий мира (энциклопедия), с. 29, 31-32:

⁹Տե՛ս՝ Մորգан Լ. Г. Древнее общество, или исследование линий человеческого прогресса от дикости через варварство к цивилизации, с. 61-68:

¹⁰Դատելով մեզ հասած հույն պատմիչների և գրողների աղքատիկ տեղեկություններից, մայրիշխանության դրսնորումներ հանդիպել են միայն այն ցեղերի մոտ, որտեղ գերակշիռ դեր է ունեցել կանանց իշխանությունը: Եվ քանի որ հույններն այդ երևույթը համարում էին «սարսափելի բարբարոսություն», նրանք բացարձակ լրությամբ են շղանցել Հունաստանուն դրսնորված մայրիշխանության փաստը:

Այդ համատեքստում հետաքրքրական է մեկ այլ փաստ ևս: Հույնները լրության են մատնել նաև մայրիշխանության այնպիսի վար դրսնորում, ինչպիսին ամազոնուհիների մասին առասպելներն են ու դիցաբանական պատումները: Վկայությունն այն է, որ ռազմաշունչ ամազոնու-

Հին և նոր քարեդարյան շրջանի հնագիտական և ազգագրական նյութերը ևս Մայր աստվածուիու դիցաբանական պաշտամունքի ուսմունքը լրացրեցին անուրանալի վկայություններով։ Այդ հիման վրա համեմատական դիցաբանությունը փաստարկված ցույց տվեց, որ պաշտամունքային այդ դրսնորումները գործնականում հանդիսացել են «ծնող և վերարտադրող կանացի բնության» ընդհանրացված կերպարները, «... որոնք դիցաբանական գիտակցության մեջ ներկայացված են առանձնահատուկ գոյի՝ տոհմի հովանավորի, որդեծնության ընդունակության տեսքով»¹¹: Իսկ դիցաբանական հասուն համակարգերին բնորոշ աշխարհակառուցների մոդելներում արդեն հստակորեն առանձնացվում են Մայր աստվածուիու մի շարք հիմնարար գործառույթներ։ Այդ համակարգում առաջին հերթին առանձնացվում է «ստեղծագործ սկիզբ» լինելու գործառույթը, որը պաշտամունքային համակարգերում դրսնորվել է երկաստիճան տեսքով՝ որպես աստված-արարչի մայր և կին և այդ խորհրդանշանը շատ անգամ նույնացվել է Մայր երկրի և տիեզերական էությունների (աստվածներ, տիտաններ, հրեշներ, մարդիկ, կենդանիներ և այլն) մայր լինելու հետ¹²: Իր հերթին, երբ Մայր աստվածուիու գործառնական բնութագրերը տարաբաշխվել են դիցաբանական կերպարների միջև, ապա այդ պարագայում ևս առնչվում ենք երկաստիճան ստորաբաժանման հետ, քանի որ դիցաբանական համակարգերի զարգացմանը զուգընթաց «Սեծ մոր» գործառույթներում հստակորեն տարանջատվում են թերատոնորֆ (հունական դիցաբանության մեջ՝ Գեա) և անտրոպոմորֆ (հունական դիցաբանության մեջ՝ Հուեա) նասերի:

Ազգագրական և հնագիտական նյութերի ընդհանրացումը թույլ է տվել նաև տոհմական համայնքներում մեծ տարածում ունեցած «քարեդարյան վեներամերի» պաշտամունքային վայրերի կրոնագիտական ընդհանրացմանը պնդել, որ արխական հասարակություններում առկա է եղել իգական և արական սկիզբների միավորմամբ կազմված երկվության պաշտամունք, թեև հավանական է

հիները ստեղծել էին սեփական «փակ հասարակությունը», որը բաղկացած էր բացառապես կանանցից: «Տղանարդկանց հասարակությունը» անհրաժեշտ էին համարում բացառապես մեկ՝ մանկածնության գործի համար, որից հետո «ամուսիններին» հետ էին ուղարկում իրենց հայրենիք: Նորածին աղջկեներին նրանք ընդունելով իրենց հասարակություն, դա ու ճնում էին ռազմիկներ (որոնք այրում էին իրենց աջ կուրծքը, որպեսզի այն չխանգարե նետ և աղեղ կրելուն: «Ամազոնուիի» բարօսի նշանակում է «ամկուրծք»): Իսկ տղաներին վերադարձնում էին իրենց հորը (կամ սպանում էին): Եվս մեկ փաստ: «Ամազոնուիիների օրվա» տոմին կամայք զվարացել են և հանգստացել, իսկ տղանարդիկ այդ ընթացքում կատարել են կանանց բոլոր պարտականությունները՝ ճաշ եփելուց մինչև երեխա բարուրելը: Այսօր էլ հունական Մինուկիսիս լեռան վրա բնակիչները տոնում են «ամազոնուիիների օրը»: Տե՛ս՝ սկզբանական բառարան, էջ 14, *Мифы народов мира*. Էնցիկլոպեդիա. Տ. 1, ս. 63; *Мифология*. Բոլյարով էնցիկլոպեդիческий словарь, с. 35:

¹¹ *Религиоведение* (Энциклопедический словарь), с. 120.

¹² Տե՛ս՝ սկզբանական բառարան, էջ 49-50, *Мифы народов мира*. Էնցիկլոպեդիя. Տ. 1, с. 179; *Мифология*. Болльярдов էնցիկլոպեդический словарь, с. 660: Հմմտ.՝ *Религиоведение* (Энциклопедический словарь), с. 120: Կրոնագիտական գրականության մեջ շրջանառվում է նաև հունական դիցաբանական շերտի աստվածների երեք (ուրանոսյան-երկնային, խթոնիկ-ստորերկրյա և երկրային) կատեգորիաների մասին ուսմունքը, որի հմագույն շերտի «դեկավար» է համարվում «Սեծ աստվածուիին», Իстория религий. В 2 т. Т. 1, М., 2002, с. 155-156: *Язычество*. Мн., 2006, с. 100-101:

համարվում նաև, որ «Մայր աստվածուհու պաշտամունքը հենվել է նախնադարյան հասարակության կանանց «հատվածի վրա»¹³: Ազգագրական տվյալները թույլ են տալիս պնդել նաև, որ արխական հավատալիքների շրջանակներում Մայր աստվածուհու դիցապաշտամունքային ըմբռնումներն առաջին հերթին կապված են եղել «ընտանեկան օջախի (կրակի)» պաշտամունքի հետ, քանի որ նրանք «օժտված» են եղել «օջախի հովանավոր և տիրուհու», «կրակի մայր և պահապան» և այլ խորհրդանշաններով: Եվ որպես «կրակի մայր և պահապան՝ նրանց պաշտամունքը նույնացվել է «ընտանիքի և տան հովանավոր» դիցուհու, ինչպես նաև՝ Մայր աստվածուհու պաշտամունքի հետ¹⁴. «Մշակութային» և «հասարակական» այդ բնութագրերից զատ «օջախի հովանավոր և տիրուհի», «կրակի մայր և պահապան»¹⁵ Մայր աստվածուհիների կերպարը նույնացվել է նաև բնական՝ պտղաբերություն պարզեցնելու խրոնիկ աստվածների հետ:

Կրոնագիտությունն այդ գուգորդությունը բացատրում է նրանով, որ արխական շրջանում կյանքն ընկալվել է «չկարգավորված» և քառային տեսքով, որի հետևանքով դիցապաշտ մտածողությունը շրջապատը նյութականացրել է և ոգիացրել, շնչավորել, այն ընկալել է որպես «կույր» ուժերի ազդեցության ոլորտ: Այս պարագայում Մայր աստվածուհու պաշտամունքը, որպես կանոն, աչքի է ընկել կոպտության հասնող «անհամանասնությամբ և աններդաշնակությամբ» և այդ պատճառով այն միաժամանակ ընկալվել է նաև որպես բնապաշտական-ոգեպաշտական և կենդանակերպ հավատալիքների չհամակարգված ամբողջություն: Վաղնջական դիցաբանական մտածողությունն այդ քառսից որպես «կենդանի և շնչավոր սկիզբ» ամենից առաջ առանձնացրել և իր համար պաշտամունքի օբյեկտ է համարել «կենսատու և մայր Երկիրը»¹⁶: Եվ այս պարա-

¹³ **Религиоведение** (Энциклопедический словарь), с. 120: Այս տեսակետը կարելի է մերժել իսկ դայի պաշտամունքի օրինակով, որին նվիրված ծեսերին մասնակցել են և տղասմարդիկ, և՝ կանայք, և՝ անգամ՝ երեխաները, մանրամասները տե՛ս՝ *Геродот*. История (в девяти томах). Л., 1972, с. 89:

¹⁴ Մայր աստվածուհու «օջախի հովանավոր» լինելու այդ խորհրդանշանը պահպանվել է նաև դիցաբանական «հասուն» շերտերում: Այսպես, քրոնոսյան շերտի հունական Յեստիա դիցուհին համարվել է «տան և օջախի աստվածուհի» (հետագայում նրա հետ նույնացվել է հռոմեական Վեստա աստվածուհու պաշտամունքը): Միաժամանակ նա համարվել է նաև օյխապոյան «գյխավոր հնգակի» (Զևս, Պուսեղոն, Յաղես, Յերա, Ղեմետրա) մայրը, որի պատճառով նրան վերագրվել է նաև «Մայր աստվածուհու» խորհրդանշան: *Տե՛ս Դիցաբանական բառարան*, էջ 133, 226, հնմտ.՝ *Религиоведение* (Энциклопедический словарь), с. 120.

¹⁵ Այդ մասին տե՛ս՝ *Դիցաբանական բառարան*, էջ 133, 226, *Мифы народов мира*. Энциклопедия. Т. 1, с. 234, 299; *Мифология*. Болшевий энциклопедический словарь, с. 122, 152:

¹⁶ Յունական դիցաբանության մեջ, օրինակ, իբրև այդպիսին՝ մեծ տարածում է ունեցել երկրի անձնավորում համարվող Գեա աստվածուհու պաշտամունքը, որին առանցքային դեր է վերագրվել նաև քեոգոնիայի գործնաբացում: Նա համարվել է «չորս (քառ, երկիր, տարուրոս, էրոս) նախասկիզբներից» (նախապոտեցիաներից) երկրորդը, որն իրենից ծնել է երկինք-Ուրանոսին, հորիաներին և Պոնտոսին (Ծովը): Ապա Ուրանոսից ծնել է երկսեռ վեց տիտանների (այդ թվում՝ Քրոնոսին և Յուեային), երեք կիկլոպների, երեք հելկաստոնքերների, ինչպես նաև՝ այլայլ խրոնիկ եակների: Նա համարվել է նաև մարդկանց նախամայրը, որի պատճառով, հավանական է, երդման ժամանակ «Գեա» անունը համարվել է «ամենասրբազնը»: Որպես «անսահման պտղաբերության» ակունք Գեայի պաշտամունքը երբեմն նույնացվել է

գայում, ինչպես պնդում է կրոնագիտությունը, դրսնորվում է Մայր աստվածուհու դիցապաշտական էական և մեկ՝ «ստեղծագործական» (արարչության ինաստով) գործառույթը¹⁷: Մայր աստվածուհու պաշտամունքին բնորոշ գործառնական այդ հատկանիշը համարվել է աշխարհի սկիզբը, կյանքի, բուսական և կենդանական աշխարհի, մարդկանց և աստվածների սկզբնավորող ակունքը և նիաժամանակ՝ Երկնքի ծնողը¹⁸: Եվ ինչպես դիցաբանական համակարգերի վերլուծությունն է ցույց տալիս, համընդհանրական այդ պաշտամունքը նույնացվել է «կանացի սկզբի» կամ Մայր աստվածուհու պաշտամունքի հետ: Փաստերից մեկն էլ այն է, որ խրոնիկ դիցապաշտության փուլում Մայր աստվածուհու պաշտամունքը նույնացվել է նաև «քնության կենսատու և արգասարեր էության» հետ¹⁹:

Մայր աստվածուհու պաշտամունքի հետ, իրեւ «անսպառ բերքատու (կարպոֆորոս)»՝ պտղաբերության և Երկրագործության հովանավոր աստվածուհի Ղենետրայի հետ, իսկ պաշտամունքային օրգաների տեսանկյունից՝ Կիբելեյի հետ: **Դիցաբանական բառարան**, էջ 49-50: Հմնտ.՝ Յանաւություն, էջ 112-115:

¹⁷ Այդ մասին տե՛ս՝ *Мифы народов мира*. Էնցիկլոպեդիա. Տ. 1, էջ 179; **Мифология**. Բոլոնոյ էնցիկլոպեդիական հանագիրական տեսաբառարան, էջ 660:

¹⁸ Երկնքի բարելական դիցաբանական աշխարհակառույցի մողելը, օրինակ, հենված է հրեշների դեմ աստվածների պայքարի ըմբռնման վկա, սակայն այս պարագայում և աշխարհակառույցի հիմք է համարվել մայրական սկիզբը: Այսպես, արարչագործության մասին աքաղաղաբելունյան առասպելը սկսվում է Մայր աստվածուհու՝ Թիհամատի մասին պատմությամբ: Նա համարվում է աստվածների ստեղծողը (ճիշտ է, ամուսնու՝ Ապսուի գործակցությամբ), տիեզերքի կառավարչությին և նույնացվում է քառսի հետ: Նրա իշանությամբ սկսում են սպառնալ կրտսեր սերնդի աստվածները (որոնց թվում նաև իր որդիները), որոնք միավորվելով որոշում են ըմբռստանալ և վերջ տալով իշխող քառսին, կարգ ու կանոն հաստատել: Այդ փորձության իմաստն այն է, որ արական սկիզբը պետք է ցուցադրի իր ամենակարող աստվածության զորությունն ու ուժը, ապա պետք է ծեռք բերեր այնպիսի հատկություն, որը կընդգծեր «նոր արարչության» նրա գերազանցությունը և կարողությունը: Այդ նպատակով է Մարդուկ-Բելը սպառնում և Երկաստու Թիհամատին (մարմնի մի մասից ստեղծվում է Երկնքը, իսկ մյուս մասից՝ Երկիրը) և ապա վերստեղծում է աշխարհակառույցը: Բայց դա կատարում է ոչ թե բնական ճանապարհով, այլ՝ «մտքի և խոսքի ամենակարող ուժով»: Այս պարագայում Մայր աստվածուհու «արարչագործական խորհրդանշան-շնորհը» փոխարինվում է աստվածային արական սկզբի մտքի և խոսքի հզորությամբ: Կասկածից վեր է նաև, որ այս առասպելն արտացոլում է քաղաքակրթության պատմության կարևորագույն մի փուլը կամ հեղաշրջումը՝ հասարակության անցումը մայրիշխանությունից հայրիշխանության: Այդ մասին մանրամասները տե՛ս՝ *Всевобщая история религий мира* (энցիկլոպեդիա), էջ 89; *Мифы народов мира*. Էնցիկլոպեդիա. Տ. 2, Մ., 1988, էջ 110, 505; **Мифология**. Բոլոնոյ էնցիկլոպեդիական հանագիրական տեսաբառարան, էջ 344, 539; *История религий*. Տ. 1, էջ 129-130: Հմնտ.՝ *Всевобщая история религий мира* (энցիկլոպեդիա), էջ 96-97; **Язычество**, էջ 104-105:

¹⁹ Ծումերական դիցաբանության հնագույն շերտում կանացի սկիզբը ոչ միայն համարվել է «մարդկության նախանայրը», այլև՝ «կենսատու սկիզբը» (աքքաղական դիցաբանության մեջ նախանայրը համարվել է նաև «աստվածների տիրություն»): Յամարվել է նաև, որ այդ «նախանայր սկիզբը» ծնվել է հողից (տարբերակ՝ Երկրից), և իրականում հանդիսանում է Մայր-հողի «կենսատու մի մասնիկը», «հողի աստվածությին», որն իր «վերածնող ուժով» հովանավորում և նպաստում է բերքատվությանը: Յամեմատաքարար ուշ շերտերում այս խորհրդանշաները նույնացվել են մայր աստվածուհու պաշտամունքի հետ (չումերական դիցաբանության մեջ Մայր աստվածուհին պատկերվել է մանկանը գրկած կնող տեսքով), տե՛ս՝ *Всевобщая история религий мира* (энցիկլոպեդիա), էջ 89-92; *Мифы народов мира*. Էնցիկլոպեդիա. Տ. 2, էջ 648:

Իրավիճակը մի փոքր այլ է դասական ուշ շրջանի դիցաբանական համակարգերում: Այս փուլում «չկարգավորված և քառսային իրականության» փոխարեն առաջնային է համարվում **մարդակերպ աստվածների և հերոսների պաշտամունքը**: Դիցաբանական այս փուլն ամենից առաջ աչքի է ընկել նրանով, որ աշխարհակառույցի հիմնարար գործոն է համարվել «տիեզերական ներդաշնակության» ըմբռնումը: Արդյունքում դիցաբանական «Մա»-ի կերպարները սկսում են «անհաշտ պայքար մղել» քառսի խորհրդանշանների՝ թերատամորֆ (հրեշակերպ) ուժերի և տարերի դեմ, հաղթում են նրանց և սահմանում «նոր», «գեղեցիկ», «կանոնակարգված ու ներդաշնակ» կյանք: Այդ ամենի ազդեցությամբ որակական փոփոխությունների է ենթարկվել նաև դիցաբանական մտածողությունը: Այսպես, եթե խորնիկ Մայր աստվածուին պաշտամունքային հիմնական խորհրդանշանը նույնացվում էր բնության արգասարերության և «կնոջ պաշտամունքի» հետ, ապա հավատալիքների օրգագոման այս փուլում պաշտամունքը նույնացվում է նաև «մայր երկրի», «մայր-հողի» և ընդիհանրության մեջ Վերցրած ամենայնի, այդ թվում նաև՝ դիցերին ու դիցուիհներին կյանք տվող Մայր աստվածուին խորհրդանշանի հետ: Պետք է նկատել, սակայն, որ պատմական օրգագոման այս փուլում ևս Մայր աստվածուին դիցաբանական կերպարը «մաքուր տեսքով» հանդես չի գալիս: Այսպես, եթե արխահիկ հավատալիքների փուլում «մաքրության» և «քարոյական կատարելության» ակունք համարվող Մայր աստվածուին պաշտամունքի ավելի շատ **զուգորդվում է սիրո աստվածուիի լինելու** («էքստատիկ գրգովածության», «սեռական կրթի» և այլն) դիցապաշտամունքային ըմբռնումների հետ²⁰:

Այդ ամենի ընդիհանրացմանբ կրոնագիտության մեջ ընդունված է համարել, որ **Մայր աստվածուին դիցաբանական պաշտամունքը առավել ամբողջական տեսք է ստանում միայն դիցաբանական հասուն համակարգերում**: Եվ պատճառն այն է, որ այս համակարգերում է միայն լիովին դրսարվում Մայր աստվածուին պաշտամունքին բնորոշ և սուբստանցիոնալ, և ատրիբուտային, և գործառնական «օռուիմենտ»-հատկանիշները: Բայց այս պարագայում նույնացեալ այդ պաշտամունքը «մաքուր» տեսքով հանդես չի գալիս, ավելի ծիշտ կինի ասել՝ հանդես է գալիս որպես տիեզերքը ծնող **«նախասկզբնական աստվածային զույգի» կողմերից մեկը**: Այդ պատճառով էլ ծագումնաբանական առանձնահատկություններից անկախ տարբեր համակարգերում Մայր աստվածուին դիցաբանական կերպարը մի կողմից բնութագրվում է «համընկնող և նույնական հատկանիշներով», իսկ մյուս կողմից՝ Մայր աստվածուին դիցաբանական խորհրդանշանները ներկայացվում են «յուրատիպ տրոհումներով», որի

Հմնտ.՝ *История религии*. Т. 1, с. 127: Կերլուծաբաններից ոմանք ուշ շրջանի մայրական պաշտամունքը կապում են հողագործական պաշտամունքի հետ, տե՛ս՝ *Шелковая Н. В.* Введение в религиоведение. Ростов Н/Д, 2007, с. 82-85:

²⁰ Այդ առնչությամբ կրոնագիտական գրականության մեջ շրջանառվում է նաև այն տեսակետը, որ Մայր աստվածուին դիցապաշտամունքային ըմբռնումների նշված փոփոխությունների հետևանքով «մերձավորարևելյան Սեծ Մոր պաշտամունքը ձեռք է բերում «Մեծ Անառակի» գծեր», տե՛ս՝ *Религиоведение* (Энциклопедический словарь), с. 120:

արդյունքում այդ խորհրդանշաները բաժանվում են մի ամբողջ շարք սեռակից դիցաբանական կերպարների միջև:

МИФОЛОГИЧЕСКИЙ ОБРАЗ БОГИНИ-МАТЕРИ

Г. А. САРКИСЯН

На основе данных сравнительной мифологии и современного религиоведения в статье показывается, что Богиния-мать - главное женское божество в большинстве мифологий мира, кульп которой в основном соотносился с "женским творческим началом в природе". Прослеживая кульп Богини-матери от верхнепалеолитической "Венеры" до прародительницы вселенной (изначально божественной пары) и "Великой блудницы", автором выделяются те основные характеристики, которые определяют ее место в мифологической модели мира. Это, в первую очередь, созидаательная функция Богини-матери со своими аспектами (как супруги бога-творца, как создательницы населяющих вселенную существ, как покровительницы) плодородия (почвы, скота, людей), как источник вечного возрождения и т.д.), функция покровительства культуры (космоса и гармонии) и, в определенных границах, противовес хаосу. Показывается также, что кульп Богини-матери часто носил мистеральный и органический характер.

MYTHOLOGICAL IMAGE OF THE GODDESS-MOTHER

G. A. SARGSYAN

On the basis of the data of comparative mythology and modern religious studies the article analyzes that Goddess-mother is the main female deity in the majority of mythologies of the world whose cult basically corresponded with "the female creative origin in the nature". Tracing a cult of the Goddess-mother from upper-paleolithic "Venus" to the progenitress of universe (initially divine pair) and "the Great harlot", the author identifies those basic characteristics which define its place in mythological model of the world. First of all it is the creative function of the Goddess-mother with its aspects of (as spouses of god-creator, as creators of beings occupying the Universe, as patronesses) fertility (soil, cattle, people), as a source of eternal revival etc.), function of protection of culture (space and harmony) and, in certain borders, a counterbalance to chaos. It is shown also that the cult of Goddess-mother often carried mystic and organic character.